ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015 թվականի N 346-Ա

2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿՑԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթների, 2000 թվականին ծնված և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիներին զորակոչային տեղամասում կցագրման աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու համար՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի ընթացքում՝ 2000 թվականին ծնված, 16 տարին լրացող և ավագ տարիքի կցագրում չանցած արական սեռի քաղաքացիների կցագրումն անցկացնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Չարենցավանի զինվորական կոմիսարիատում:

2. Կցագրում անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հանձնաժողովի նախագահ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Չարենցավանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա.Հովհաննիսյան,

2) Հանձնաժողովի անդամներ՝ բժիշկ մասնագետներ՝

ա. վիրաբույժ	Վ.Պողոսյան,
բ. թերապևտ	Է.Մսխչյան,
գ. ակնաբույժ	Ա.Երիցյան,
դ. քիթ-կոկորդ-ականջ	Հ.Աֆյան,
ե. նյարդաբան	Հ.Նազինյան,
զ. սրտաբան	Ս.Հովհաննիսյան,
է. հոգեբույժ	Ա.Չիլինգարյան,
ը. մաշկավեներաբան	Կ.Բաղալյան,
թ. բուժքույր	Ռ.Ամիրխանյան:

3. Բժշկական քննություններ անցկացնող մասնագետների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բժշկական կենտրոններում նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների բժշկական

փորձաքննություններն իրականացնել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի:

5. <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Գ.Սահակյանին՝

1) ժամանակին կազմակերպել այն պատանիների բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

2) ապահովել հանձնաժողովին անհրաժեշտ գույքով, սարքավորումներով և դեղորայքով:

6. Կցագրումն անցկացնող հանձնաժողովի նախագահին՝ կցագրման ավարտից հետո վերլուծել բոլոր հիվանդ ճանաչված պատանիների հիվանդության պատճառները, սահմանել խիստ հսկողություն ժամանակին բուժման ենթարկելու համար:

7. Առաջարկել համայնքների ղեկավարներին և հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Չարենցավանի զինվորական կոմիսարիատի ժամանակացույցի, ապահովել պատանիների պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

8. Սույն որոշմամբ սահմանված աշխատանքների կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Չարենցավանի զինվորական կոմիսար, գնդապետ Ա.Հովհաննիսյանի վրա:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի վրա:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 18
ք. Հրազդան